յարձակեցան թշնամիքն 'ի վերայ նորա, և նա արտասուօք խնդրեաց օգնութիւն 'ի Քրիստոսէ, և յարձակեալ 'ի վերայ նոցա՝ Լ.Ա. անձինս կոտորեաց 'ի թշնամեաց. Նա որբեաց զամենայն Իտալիայ ի հերձուածոյն Արիոսի. վասնզի յոյժ ուղղափառ էր 'ի հաւատս, 'ի կերակուրս և յըմպելիս պարկեշտ և սանձող ցանկութեան ախտից: Նա անպարտեալ 'ի զօրացն, զայլ ոմն Մաքսիմիանոս անուն եղին ինքնակալ: Եւ Գրատիանոս ոտիւքն և ձեռօքն փաթերակեցաւ և խարբալեցաւ: Եւ մնեալ. ոմանք հատին զգլուխ նորա և զորդւոյ նորա յայլում աւուրջ ի Լիան կոչեցեալ քաղաք, յետ դարձի յաքսորանացն իւրոց, զոր սպանին հատանմամբ գլխոյն, և զմարմինն թողին անթաղ՝ դէշ անկեալ գազանաց երկրի և թռչնոց երկնից:

Թէոդոս մեծն և առաջին՝ քաղաքաւ Սպանիացի, սկսաւ յամի Տեառն ՅՂ.Ը. ինքնակալեալ ամս Ժ.Ը. և ամիս Ժ.Ը:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան